«ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Արևաշողի «Հասմիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի՝ լոգոպեդի, 1 դրույքաչափ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանով սահմանված նախադպրոցական ուսումնական հաստատությունների պաշտոնների նկարագրի՝ նախադպրոցական ուսումնական հաստատության լոգոպեդի թափուր պաշտոն զբաղեցնողը պետք է՝

1) տիրապետի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին.
2) իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝
ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասի», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Լիցենզավորման մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը, «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը», Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը.

բ. հատուկ մանկավարժության տեսության և մեթոդիկայի, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի հիմունքները:
Որակավորման պահանջները՝ հաստատության լոգոպեդի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ: https://escs.am/am/news/21826

Լոգոպեդի հաստիքի համար սահմանված է 1 հաստիքային միավոր, պաշտոնային դրույքաչափը՝ 140 000 (մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:
Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենին կամ տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1) դիմում (Ձև 1).
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).
3) անձը հաստատող փաստաթուղթ.
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).
5) ինքնակենսագրություն (Ձև 4).
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները՝ վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, Մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3) տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.

4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

Փաստաթղթերն ընդունվում են 2026 թվականի հոկտեմբերի 12 -ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 6-ը ներառյալ ամեն օր ժամը 10:00-ից 18:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից, ՀՀ Լոռու մարզ, Սպիտակ համայնք, գյուղ Արևաշող՝ 10փողոց 17/1 հասցեում:

Մրցույթը անցկացվելու է երկու փուլով թեստավորման և հարցազրույցի ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.10.2024թ-ի №1981-Ա/2 հրամանի մշակված հարցաշարերի: https://escs.am/am/news/11978

Լոգոպեդի մրցույթի թեստային փուլը տեղի կունենա 2026թ-ի նոյեմբերի 13-ին ժամը 10:00-ին, իսկ հարցազրույցի փուլը անցկացվում է նույն օրը թեստավորման արդյունքների հրապարակումից հետո՝ 11:30-ին:

ՀՀ Լոռու մարզ, Սպիտակ համայնք, գյուղ Արևաշող 10փողոց 17/1 հասցեում:

Էլ.փոստ՝ edvinakhachatryan11@gmail.com